YALE UNIVERSITY
3 9002 07499 3396

4/6

Robert Ellis

78

# ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

## ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

# ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ.

# ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ
## ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ
# ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ԸՍՏ ՀԱՐԱԶԱՏ ԵՒ ԱՆԿԵՂԾ ԳԱՂԱ֊ՓԱՐԱՑ ՀԱՅԿԱԿԱՆՍ ՆԱԽՆԻ ԹԱՐԳ֊ՄԱՆՈՒԹԵԱՆ·

Հանդերձ առընթերցութեամբ հաւատարիմ նկարագրի բացայայտութեան· ըստ մարթելոյ յերեւեալ 'ի մերս հասարակաց անխառն բարբառ· 'ի շահ օգտի հոգեսիրաց :

Յաշխատասիրութենէ Տ՟ն Յովհաննու Վարդապետի Զօհրապեան Կոստանդնուպօլսեցւոյ·

Երկրորդ տպագրութիւն ուղղագործեալ 'ի նմին հեղինակէ :

1828· — ՌՄՀԷ·

'Ի ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆ ՓԱՐԻԶ·

'Ի Գործարանի Տոնտէի Տիւբրէ·

Yale Divinity Library
New Haven, Conn.

Zarm
828?

PARISIIS, TYPIS DONDEY-DUPRÉ.

ՑՈՒՑԱԿ

# ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

## ԸՍՏ ԳԼԽՈՑ ԵՒ ԹՂԹԱՀԱՄԱՐՈՑ·


| | | | |
|---|---|---|---|
| ա· | ԱՒԵՏԱՐԱՆ ըստ Մատթէոսի· | իը | 1 |
| բ· | Ըստ Մարկոսի· | ժզ | 109 |
| գ· | Ըստ Ղուկասու· | իդ | 177 |
| դ· | Ըստ Յովհաննու· | իա | 292 |
| ե· | Գործք Առաքելոց· | իը | 378 |
| զ· | Թուղթ Պաւղոսի Առ Հռովմայեցիս· | ժզ | 488 |
| է· | Առ Կորնթացիս առաջին· | ժզ | 533 |
| ը· | Առ Կորնթացիս երկրորդ· | ժգ | 578 |
| թ· | Առ Գաղատացիս· | զ | 608 |
| ժ· | Առ Եփեսացիս· | զ | 623 |
| ժա· | Առ Փիլիպեցիս· | դ | 638 |
| ժբ· | Առ Կողոսացիս· | դ | 649 |
| ժգ· | Առ Թեսաղոնիկեցիս առաջին· | ե | 660 |
| ժդ· | Առ Թեսաղոնիկեցիս երկրորդ· | գ | 669 |
| ժե· | Առ Եբրայեցիս· | ժգ | 675 |
| ժզ· | Առ Տիմոթէոս առաջին· | զ | 710 |
| ժէ· | Առ Տիմոթէոս երկրորդ· | դ | 722 |
| ժը· | Առ Տիտոս· | գ | 731 |
| ժթ· | Առ Փիլեմոն· | ա | 736 |
| ի· | Թուղթ Յակոբայ. կաթուղիկէ· | ե | 739 |

ԻԱ. Թուղթ Պետրոսի առաջին. Ե . . . . . . . . . . . . . . . . . 751
ԻԲ. Պետրոսի երկրորդ. Գ . . . . . . . . . . . . . . . . . . . 763
ԻԳ. Յովհաննու առաջին. Ե . . . . . . . . . . . . . . . . . . 771
ԻԴ. Յովհաննու երկրորդ. Ա . . . . . . . . . . . . . . . . . . 783
ԻԵ. Յովհաննու երրորդ. Ա . . . . . . . . . . . . . . . . . . 784
ԻԶ. Յուդայի. կաթող. Ա . . . . . . . . . . . . . . . . . . . 786
ԻԷ. Յայտնութիւն սրբյն Յովհաննու առաք : ԻԲ . . . . . . 790


# ԱՒԵՏԱՐԱՆ

# ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ.

## ԳԼ. Ա.

ԳԻՐՔ ծննդեան յի̃ի
քի̃ի՝ որդւոյ դաւթի
որդւոյ աբրահամու :

2 Աբրահամ ծնաւ զիսա_
հակ : Իսահակ ծնաւ զյակովբ :
Յակովբ ծնաւ զյուդա, և զեղ-
բարս նորա :
3 Յուդա ծնաւ զփարէս և
զզարա 'ի Թամարայ : Փարէս
ծնաւ զեզրոմ : Եզրոմ ծնաւ
զարամ :
4 Արամ ծնաւ զամինադաբ :
Ամինադաբ ծնաւ զնաասոն :
Նաասոն ծնաւ զսաղմոն :
5 Սաղմոն ծնաւ զբոոս 'ի
հռեքաբայ : Բոոս ծնաւ զովբէդ
'ի հռութայ : Ովբէդ ծնաւ զյե-
սսէ : Յեսսէ ծնաւ զդաւիթ
արքայ :
6 Դաւիթ ծնաւ զսողոմոն
'ի կնոջէն ուրիայ :
7 Սողոմոն ծնաւ զռոբո_
վամ : Ռոբովամ ծնաւ զաբիա :
Աբիա ծնաւ զասափ :
8 Ասափ ծնաւ զյովսափաթ :

ՅԻՍՈՒՍԻ քի̃ի ազգա-
բանութեան գիրքը ,
(ան՝ որ) դաւիթի որդին (էր, որ
անալ) աբրահամի որդին :
2 Աբրահամ՝ իսահակը ծնաւ :
իսահակ՝ յակոբը ծնաւ : յակոբ՝
յուդան, ու անոր եղբայրները
ծնաւ :
3 Յուդան՝ փարէսն ու զարան
ծնաւ՝ Թամարէն : փարէս՝ եզրոմը
ծնաւ : եզրոմ՝ արամը ծնաւ :
4 Արամ՝ ամինադաբը ծնաւ :
ամինադաբ՝ նաասոնը ծնաւ : նա_
ասոն՝ սաղմոնը ծնաւ :
5 Սաղմոն՝ բոոսը ծնաւ՝ հռե_
քէբայէն : բոոս՝ ովբէդը ծնաւ՝
հռութէն : ովբէդ՝ յեսսէն ծնաւ :
յեսսէն՝ դաւիթ թագաւորը ծնաւ :
6 Դաւիթ՝ սողոմոնը ծնաւ՝ ու_
րիայի կընկընէն :
7 Սողոմոն՝ ռոբովամը ծնաւ :
ռոբովամ՝ աբիան ծնաւ : աբիա՝
ասափը ծնաւ :
8 Ասափ՝ յովսափաթը ծնաւ :

թեան գրոյս այսորիկ․ ա̃յ եր_
կի՛ր պագ ։

10 Եւ ասէ ցիս դարձեալ․
մի՛ կնքեր զբանս մարգարէա_
կան գրոցս այսմիկ․ քանզի ժա_
մանակս մե՛րձ է ։
11 Որ ամպարշտելոցն է՝
ամպարշտեսցի՛, և որ աղտե_
ղանալոցն է՝ աղտեղասցի և
որ արդարանալոցն է՝ արդա_
րասցի՛, և որ սրբելոցն է՝
սրբեսցի՛ ։
12 Ահա՝ գա՛մ վաղվաղակի՝
և վարձք իմ ընդ ի՛ս, հատու_
ցանե՛լ իւրաքանչիւր ըստ գոր_
ծըս իւրեանց ։

13 Ե՛ս եմ ալփա՛՝ և ո՛վ,
սկիզբն և կատարած, առաջին
և վերջին ։
14 Երանելի՛ք են՝ որ պա_
հեն զպատուիրանս նորա․ նոքա
ունին իշխանութիւն ուտե՛լ 'ի
փայտէն կենաց՝ և մտանե՛լ
ընդ դրունս քաղաքին ։

15 Այլ ելցե՛ն արտա՛քս՝
շունք, և դեղատուք, սպա_
նողք, և կռապաշտք, և ամե_
նեքեա՛ն որ սիրեն զստութիւն ։

16 Ե՛ս յի̃ առաքեցի զհրեշ_
տակ իմ վկայե՛լ զայս ձեզ ե_
կեղեցեացդ․ ե՛ս արմատ և սե՛ռ
'ի դաւթայ, և ա՛ստղ պայծառ
առաւօտին ։
17 Եւ հոգի՝ և փեսայն՝ որ
դալոցն եմ ։ և որ լսէ՝ ասելով
թէ եկ․ և որ ծարաւի իցէ՝
եկեսցէ՛, և որ ոք կամի առ_
նուլ զջուրն կենաց ձրի՛ ։
18 Վկայե՛մ և ես ամենայ_
նի՝ որ լսէ զբանս մարգարէու_

որ աս գրքիս մարգարէական խօս_
քերը կըպահեն․ ա̃յ ըրէ՛ երկրը_
պագութիւնը ։
10 Ու (ան՝) մէյմալ նորէն ինծի
ըսաց․ աս գրքիս մարգարէական
խօսքերը՝ մի՛ գոցեր պահեր․ պատ_
ճառն որ՝ ատենըս ալ մօտ է ։
11 Ան որ ինքը անբարիշտ է՝
թող անբարիշտ ըլլայ, ու ան որ
աղտոտ է՝ թող աղտոտ մընայ, ու
ան որ արդար է՝ արդար կըմնայ,
ու ան որ մաքուր է՝ մաքուր ։

12 Հանա ես շուտով կուգամ,
ու իմ (տալու) վա՛րձքս ալ իմ
հետս (է)․ որ ամմէն մէկուն ի_
րենց գործքերնուն դէմը հատու_
ցումը ընեմ ։
13 Ե՛ս ալփա՛ եմ՝ ու ո՛վ, ըս_
կիզբը՝ ու լըմընցըլածքը, առ_
ջինը՝ ու ետքինը ։
14 Երանելի՛ են անոնք՝ որ ա_
նոր պատուիրանքները կըպահեն․
որ իրենք իրաւունք կունենան
կենաց ծառէն ուտելու, ու (ան)
քաղքին դռներէն ներս մտնե_
լու ։
15 Բայց (անկէց) դուրս կըլ_
լան շնացողներն ու մահադեղող_
ները, արունտէրներն ու կռա_
պաշտները, ու ան ամմէնքն որ
սուտ բաներ կըսիրեն ։
16 Ե՛ս յի̃ս՝ իմ հրեշտակըս
խրկեցի՝ որ ձեզի եկեղեցիներուդ
աս (բաներըս) վկայէ ։ ես որ դա_
ւիթի արմատէն ու ցեղէն (եմ),
ու առտըվանը պայծառ աստղը․
17 Ու ան հոգին՝ ու փեսան
(եմ) որ պիտի գամ ։ ու ան որ
կըլսէ (ու) կըսէ՝ թէ եկո՛ր․ ու ան՝
որ ծարված է՝ թող գա՛, որ ինքը
կենաց ջուրը ձրի կուզէ առնել ։
18 Ի՛սալ կըվկայեմ ամմէնուն
(կըսեմ,) ան որ աս գրքիս մար_



թեան զրոցս այսմիկ․ թէ ոք
յաւելցէ 'ի սա՝ յաւելցէ ա̃ծ
'ի վերայ նորա զեւթն հարուա_
ծսն գրեալս 'ի գիրս յայս ։

19 Եւ եթէ ոք պակասե_
ցուսցէ 'ի բանից մարգարէու_
թեան գրոյս այսմիկ՝ պակասե_
ցուսցէ և հատցէ ա̃ծ զբաժին
նորա 'ի ծառոյն կենաց, և 'ի
քաղաքէն սրբոյ՝ որ գրեալ է
'ի գիրս յայս ։
20 Ասաց՝ որ վկայեացն
զայս․ գամ ես վաղվաղակի ։
ա՛մէն․ եկն տ̃ր յ̃ի ք̃ս ։
21 Շնո՛րհք տ̃ն մերոյ յ̃ի
ք̃ի 'ի վերայ ամենայն սրբ_
բոց․ Ամէն ։

գարէական խօսքերը կըլսէ․ որ
թէ մէկը անոր մէջը (բանմը) է_
վէլցընէ, ա̃ծ ալ անոր վրա կէվէլ_
ցունէ՛ ան ոխտը պատուհասներն
որ աս գրքիս մէջը գրված է ։
19 Ու թէ որ մէկը աս գրքիս
մարգարէական խօսքերէն (բան)
պակսեցընէ՝ ա̃ծ ալ անոր բա_
ժինը կըպակսեցունէ ու կըկըտ_
րէ կենաց ծառէն՝ ու սըրբերուն
քաղքէն, ան որ աս գրքիս մէջ
գրված է ։
20 Ինքը՝ որ աս (բաներս) վըկ_
այեց, ըսաց որ՝ ես շուտով կու_
գամ ։ անանկ է՝ եկո՛ր տ̃ր յ̃ի ք̃ս ։
21 Տեառնը մերոյ յ̃ի ք̃ի
շնորքը ամմէն սրբերուն վըրա
(ըլլայ)․ Ամմէն ։

ԿԱՏԱՐԵՑԱՒ

Երկբարբառ Նոր կտակարան Տ̃ն մերոյ Յ̃սի Ք̃սի ։